ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 8-ը նոյեմբերի 2017թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության սպառազինության բաժնի պետի տեղակալ, գնդապետ Յու. Եսայան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (ՀԲՄ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 08.11.2017թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Սպեցմաշ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-

20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Կարապետյան

Գնահատող Յու. Եսայան

Գնահատող Տ. Գասպարյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

08.11.2017թ.